



Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto. 18. Յուլիուս 1982.

Մեծայարգ Տիար
Անդրանիկ Զաքարեան
Աստ.

Յարգելի Պր. Զաքարեան,

Ժխական Խորհուրդի վարչական կազմէն հրաժարելու որոշումնիդ տեղեկացնող ձեր 29 Դեկտեմբեր 1981 թուակիր նամակը ստացանք:

Ցաւ կը զգանք, որ ձեր շրջանը աւարտելէ երկու ամիս առաջ մեր մէջէն կը բաժնուիք:

Ժխական Խորհուրդի աշխատութիւններուն եւ առնուած որոշումներուն առհասարակ համակարծիք եղած էիք, որով նամակի մէջ թուագրուած պատճառաբանութիւնները մեզի զարմանք պատճառեցին:

Ձեր անձին եւ ձեր ընտանիքին յանդէպ եղած անախորժ դէպքը մեզի ալ ցաւ կը պատճառէ: Վստահ ենք, որ ձեր հրաժարական նամակը այս անախորժ դէպքի ազդեցութեան տակ, անգիտակցաբար դրկած էք: Կը յուսանք որ, շատ մօտ ատենէն, կ'անդրադառնաք թէ ձեզ եւ ձեր ընտանիքը վարկաբեկողները որոնք են ու ժխական Խորհուրդին այդպիսի նամակ մը դրկած ըլլալէ ցաւ կը զգաք:

Դուրք՝ ձեզ ազատ զգացէք, որեւէ տեղ եւ որեւէ ատեն ձեր փափաքած ձեւով արտայայտուելու: Դուրք շատ լաւ գիտէք թէ՛ ժխական Խորհուրդը հանրութենէ ծածկելիք որեւէ բան մը չէ ունեցած եւ ներկայիս ալ չունի:


Եկեղեցին, որ Աստուծոյ տունն է, ամեն անձի առջեւ բաց է ու անոնք, որոնք հաւատացեալ ժողովուրդի հետ միասին աղօթել կ'ուզեն, կրնան գալ եւ աղօթել: Եկեղեցին, սա կամ նա միութիւնը չէ, որ անձեր այդ միութեան գաղափարը չհաւնելով հեռանան:


Եկեղեցիէն կը հեռանան անոնք, որոնք քրիստոնէական վարդապետութիւնը լսելէ տարբեր նպատակներով հոն եկած են:

Մենք՝ որպէս ծխական խորհուրդ, ձեր վիճակը աւելի չվատարացնելու նպատակաւ, ձեր անհիմն գրութիւնները նկատի չենք առնել: Կը հաւատանք մեր Տիրոջ՝ Աստուծոյ դատաստանին, որմէ ոչ ոք կրնայ խուսաբիլ:

Թող Տէրը ձեզի օգնական ըլլայ:

Ի Դիմաց
Ծխական խորհուրդի


Ղեկնող Նահմանիչքեան
Ատենաղպիր


Արմէն Քիւրքժեան
Ատենապետ

Պատճէն

Առաջնորդ Սրբազան Հօր